Հաստատում եմ:
Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական
համալսարանի ռեկտոր՝ Գ. Գևորգյան

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Դավիթ Ռոմիկի Մոսինյանի «Պատմության փիլիսոփայական հայեցակերպերի մեթոդաբանական վերլուծություն» թեմայով Թ.00.01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի անվան փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի 2024 թ. հոկտեմբերի 18-ի նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչ, փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հասմիկ Հովհաննիսյանը, փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսորներ Ռոբերտ Ջիջյանը և Քաջիկ Օհանյանը, փիլ. գիտ. թեկնածու, դոցենտներ Անդրանիկ Ստեփանյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, փիլ. գիտ. թեկնածու, ասիստենտ Մարինե Շահբազյանը և դասախոս Նելլի Պետրոսյանը:

Նիստի օրակարգում, ի թիվս այլ հարցերի, դրված էր Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 013 մասնագիտական խորհրդին հրապարակային պաշտպանության ներկայացված Դավիթ Ռոմիկի Մոսինյանի «Պատմության փիլիսոփայական հայեցակերպերի մեթոդաբանական վերլուծություն» թեմայով ատենախոսության մասին Թ.00.01՝ «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության քննարկումը:

Ելույթ ունեցան ատենախոսության գրախոսներ Քաջիկ Օհանյանը և Անդրանիկ Ստեփանյանը՝ հրապարակելով իրենց գրավոր կարծիքները:

Արտահայտվեցին պրոֆեսոր Ռ. Ջիջյանը և դոցենտ Հովի. Հովհաննիսյանը:

Քննարկման արդյունքներն ամփոփեց ամբիոնի վարիչ Հ. Հովհաննիսյանը:

Քննարկելով Դավիթ Ռոմիկի Մոսինյանի «Պատմության փիլիսոփայական հայեցակերպերի մեթոդաբանական վերլուծություն» թեմայով ատենախոսությունը՝ նիստի մասնակիցներն ընդունեցին հետևյալ որոշումը.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Մոսինյանի ատենախոսությունը վերաբերում է պատմության փիլիսոփայությանը, պատմության փիլիսոփայական հայեցակերպերին: Ներկայացված ատենախոսության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ պատմության փիլիսոփայությունը նպաստում է պատմագիտական ճգնաժամերի հաղթահարմանը: Պատմությունը ժամանակ առ ժամանակ, իսկ վերջին շրջանում հատկապես, վերանայումների ու վերաիմաստավորումների կարիք է զգում: Այդ գործում փիլիսոփայության դերն անուրանալի է, իսկ մասնավորապես պատմության փիլիսոփայության գործառույթը՝ անգերագնահատելի: Ատենախոսության խնդիրն է եղել հնարավորինս որոշակիություն մտցնել պատմության փիլիսոփայության բնագավառի այսպես ասած մետամակարդակում՝ դասակարգելով պատմափիլիսոփայական մոտեցումները: Ատենախոսին հաջողվել է վերհանել պատմությանն առնչվող առանցքային փիլիսոփայական խնդիրները, ցույց տալ դրանց կարևորությունը ինչպես պատմագիտական, այնպես էլ պատմափիլիսոփայական մտքի զարգացման գործում և վերլուծել պատմության փիլիսոփայության շրջանակներում ձևավորված ավանդական ու ժամանակակից մի շարք հայեցակարգեր: Թեմայի արդիականության մասին վկայում է նաև այն նորագույն մասնագիտական գրականության ծավալը, որն առկա է ատենախոսության մեջ հղումների կամ վերլուծումների տեսքով:

Ատենախոսությունն ունի տրամաբանական կուռ կառուցվածք. ներածությունը, չորսական ենթագլուխներ պարունակող չորս գլուխները և եզրակացություններն ապահովում են ատենախոսության հիմնական գաղափարների շարունակականությունը և մտքերի զարգացումը: Ատենախոսը հստակորեն

ձևակերպել է հետազոտության նպատակն ու խնդիրները, ուսումնասիրել է թեմային վերաբերող հսկայական գրականություն, իրականացրել է պատմության փիլիսոփայության խնդիրների վերաբերյալ առկա մոտեցումների և հայեցակարգերի մանրակրկիտ և խոր վերլուծություն: Պատմության փիլիսոփայության հայեցակարգերի հետազոտությունը ներկայացված է համակարգային մոտեցմամբ, ինչը հնարավորություն է տվել ամբողջականորեն ու բազմաչափորեն սահմանել խնդրո առարկան: Ատենախոսությունն ունի հստակ ու որոշակի գիտական ապարատ, շարադրված է գրագետ և ակադեմիական բարեխղճությամբ: Այնուամենայնիվ, կուզեինք այստեղ ուշադրություն հրավիրել մի քանի նկատառումների վրա:

Նախ՝ կառուցվածքային առումով, ինչը հայեցակերպերի դասակարգման հետևանքն է, հարց է առաջանում, թե ինչու են մի կողմից՝ նույնացվել բարոյագիտությունը և տրամաբանությունը (ինչն արտացոլված է ատենախոսության երրորդ գլխում), մյուս կողմից՝ «կամ» շաղկապով նույն հարթության վրա են դրվել սոցիալ-փիլիսոփայական և քաղաքագիտական հայեցակերպերը:

Այնուհետև՝ ատենախոսությունը հավակնություն ունի հնարավորինս ամբողջականորեն ու համապարփակորեն ներկայացնել պատմության փիլիսոփայության ոլորտը, ինչի ուղղությամբ մեծ աշխատանք է կատարված, սակայն ատենախոսությունից դուրս են մնացել պատմության փիլիսոփայության ժամանակակից որոշ հայեցակարգեր, ինչպիսին օրինակ՝ պատմության փիլիսոփայության սիներգետիկական հայեցակարգն է: Մինչդեռ այդ ուղղությամբ արդեն իրականացված են հետազոտություններ, հրատարակված են աշխատություններ (տե՛ս օրինակ՝ Бранский В.П., Оганян К.М., Кармин А.С. *Синергетическая философия истории. Кол. монография Петербургской школы социальной синергетики.* СПб.: Изд-во КОПИ-ПРИНТ Рязань, 2009. – 314 с.): Այդ հայեցակարգի ընդգրկումն առավել կհարստացներ ատենախոսությունը և էականորեն կնպաստեր դրա բարելավմանը:

Որոշ հարցեր կան նաև ատենախոսության մեթոդաբանական հատվածի հետ կապված: Հաշվի առնելով, որ ատենախոսության վերնագրում առկա է «մեթոդաբանական վերլուծություն» ձևակերպումը, առավել ևս ուշադրությունը պետք

է դարձվեր մեթոդներին ու դրանց հստակեցմանը: Իբրև հետազոտության հիմնական մեթոդ նշված է համակարգային մեթոդը, բայց դրա ընտրության հիմնավորումը կարծես թե կաղում է. ինչո՞ւ և ինչպե՞ս է դա ապահովում հետազոտության ամբողջականությունն ու լրիվությունը: Մեթոդաբանական առումով ատենախոսությունը կշահեր, եթե կիրառվեին նաև մի շարք բնագիտական մեթոդներ: Գիտության փիլիսոփայության բնագավառում հսկայական աշխատանք է արվել այդ ուղղությամբ, և կարելի էր այդ ձեռքբերումներն օգտագործել նաև պատմության փիլիսոփայական ուսումնասիրման պարագայում:

Ատենախոսության մեջ նկատելի են նաև, այսպես ասած, տեխնիկական խնդիրներ: Մասնավորապես՝ ինչպես ատենախոսության, այնպես էլ սեղմագրի 7-րդ էջում գրված է, որ պատմության փիլիսոփայություն եզրույթն «առաջին անգամ գործածել է Վոլտերը», բայց հղում չկա նրա համապատասխան աշխատությանը: Ի դեպ, հղումները բացակայում են նաև ատենախոսի՝ ատենախոսության հիմնական դրույթներն արտահայտող որոշ աշխատությունների դեպքում. չի երևում, թե ատենախոսության որ դրույթը ատենախոսի որ աշխատության մեջ է քննարկել ու հիմնավորվել:

Կցանկանայինք հիմնավորման տեսանկյունից ուշադրություն հրավիրել նաև որոշ լեզվական վիճահարույց հատվածների վրա: Ատենախոսությունն էլ, սեղմագիրն էլ սկսվում են պնդումով, թե «պատմությունը ճանաչելի չէ փորձիմացությամբ». այստեղ կամ «փորձիմացություն» բառը բացորոշման կարիք ունի, կամ էլ այդ պնդումը պետք է հիմնավորվի:

Քանիցս հանդիպում են ձևակերպումներ ու արտահայտություններ, որոնք թերևս լրացուցիչ պարզաբանման կարիք ունեն, զորօրինակ՝ «մտածել պատմությունը», «իրադարձութենական պատմություն», «իրողութենական և գրութենական պատմություն» և այլն:

Ատենախոսությունը, ինչպես արդեն նշեցինք, բավականին լայն ընդգրկում ունի, աչքի է ընկնում խոր վերլուծականությամբ և հավակնություն ունի առաջին անգամ մեկտեղել պատմության փիլիսոփայական բոլոր հայեցակերպերը: Ատենախոսության հիմնական նորույթը համադրական մոտեցմամբ պատմության փիլիսոփայության՝

որպես գիտակարգի որոշակիացումն է, որը ձևակերպված է 6 առանձին դրույթներով: Սակայն տպավորություն է, որ կատարված աշխատանքն ավելին է, քան դրա շրջանակներում ձևակերպված գիտական նորույթներն են արտահայտում: Այդ տպավորությունից խուսափելու համար ատենախոսը պետք է ավելի հստակ ձևակերպեր նորույթները: Գիտական նորույթները պետք է լինեն միանշանակ. եթե դրանք մեկնաբանությունների ու տարընթերցումների տեղիք են տալիս, յուրաքանչյուր ընթերցող կհասկանա յուրովի, ինչն էլ անորոշության տպավորություն կստեղծի: Ատենախոսության մեջ ձևակերպված 2-րդ նորույթի համաձայն՝ «պատմության գոյաբանական, իմացաբանական, տրամաբանական-բարոյագիտական և քաղաքագիտական հայեցակերպերը սպառում են պատմությունը փիլիսոփայորեն մտածելու դիտանկյունները» (սեղմագիր, էջ 12): Բավականին կոշտ այս ձևակերպումը կարծես թե ահազանգում է պատմության փիլիսոփայության ոլորտում փակուղու ձևավորման մասին: Բայց արդյոք երբևէ սպառվո՞ւմ են փիլիսոփայական մտածողության հնարավորությունները, «սպառել» բառը չի աղքատացնո՞ւմ փիլիսոփայությունը: Ինչպե՞ս կարող ենք համոզված լինել, որ չկան կամ ի հայտ չեն գա պատմությունը մտածելու նոր դիտանկյուններ: Ատենախոսության 3-րդ նորույթը վերաբերում է նրան, որ պատմության փիլիսոփայության ոլորտի միասնականությունը հնարավոր է միայն որպես ատենախոսի առանձնացրած հայեցակերպերի դիրքերից իրականացվող երկխոսություն: Սա թերևս կարևոր դրույթ է, բայց կարծես թե կիսատ է մնացել, որովհետև պետք էր ցույց տալ, թե ինչպես է տեղի ունենում այդ երկխոսությունը, պետք էր մատնանշել երկխոսության համար անհրաժեշտ ընդհանուր եզրերը: Ամենախոցելին թերևս 4-րդ նորույթն է, որը ձևակերպված է այսպես. «Պատմության փիլիսոփայական յուրաքանչյուր հայեցակերպ ամբողջական է դառնում, եթե դիտարկվում է մյուս հայեցակերպերի հետ հարաբերության մեջ, իսկ դրանցից բխող խնդիրները հնարավորինս որոշարկվում են մյուս խնդիրների հաշվի առնումով» (սեղմագիր, էջ 12): Արդյո՞ք հայտնի չէր և նորույթ է, որ ինչ-որ մի խնդիր կամ հայեցակերպ ավելի է որոշարկվում, երբ դիտարկվում է հարակից խնդիրների կամ հայեցակերպերի հետ միասին: Եվ վերջապես՝ 6-րդ նորույթը հաստատում է, որ պատմության փիլիսոփայական որևէ հայեցակերպ

ճանաչողական առումով առավելություն չունի մյուսների նկատմամբ. բայց չէ՞ որ ամեն հայեցակերպ ունի իր յուրահատկությունը, և դրա դիտանկյունից մյուսները պակաս կարևոր են դառնում: Նորույթների վերաձևակերպն առավել հիմնավոր ու կառուցիկ կդարձնի ատենախոսությունը:

Բովանդակային առումով մեծ ու կարևոր է աշխատանք է կատարված, որի շրջանակներում վերհանված խնդիրները, դրանց համապատասխան վերլուծությունները և ընդհանրապես հետազոտության արդյունքներն էականորեն նպաստում են ոչ միայն բուն պատմության փիլիսոփայության ոլորտի որոշակիացմանը, այլև պատմագիտական հետազոտությունների հիմնավորմանն ու հարստացմանը: Ատենախոսությունը մեթոդաբանական հենք կարող է լինել կոնկրետ պատմագիտական նյութի առավել համակողմանի վերլուծության համար: Վստահ ենք, որ դա որպես փիլիսոփայական հիմք կծառայի ատենախոսին իր հետագա հետազոտություններում՝ ուղղված պատմության և մասնավորապես հայոց պատմության վերաիմաստավորումներին:

Ատենախոսության եզրակացությունները բխում են բուն հետազոտությունից և արտահայտում են կատարված աշխատանքի էությունը: Ստացված արդյունքներն ու եզրակացությունները վստահաբար կարելի է կիրառել ինչպես գիտական, այնպես էլ կրթական գործունեություններում: Եզրակացությունները վկայում են ատենախոսության ընդգրկունության ու խորության մասին, սակայն որոշ դեպքերում վերաձևակերպումների կարիք ունեն՝ հնարավոր տարընթերցումներից խուսափելու համար:

Նշված դիտողություններն ու նկատառումները ավելի կատարյալ գիտական աշխատանք ունենալու նպատակ են հետապնդում և բնավ չեն ստվերում ատենախոսության արժեքը: Ավելին՝ ամբողջ վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնելու, որ Դավիթ Մոսինյանի ատենախոսությունը համապատասխանում է դոկտորական ատենախոսությունների համար ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի սահմանած բոլոր պահանջներին, ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը, իսկ Դավիթ Ռոմիկի

«Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է ամբիոնի 2024 թ. հոկտեմբերի 18-ի թիվ 4 նիստում (արձանագրություն թիվ 1):

Հասմիկ Հովհաննիսյան

Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի անվան փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի վարիչ

«Փիլ. գիտ. դոկտոր Հասմիկ Հովհաննիսյանի ստորագրությունը հաստատում եմ»:

ՀՊՄՀ գիտ. քարտուղար Մարիամ Իսպիրյան

Տեղեկություններ առաջատար կազմակերպության մասին.

Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան
հասցե՝ ք. Երևան 0010, Տիգրան Մեծի 17
հեռ.՝ 010597049
էլ. փոստ՝ aspu.am@aspu.am